2014թ. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝

Հայոց լեզու և գրականություն

ԳԹԿ-ն 2014թ. հայոց լեզվի և հայ գրականության պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների, ինչպես նաև շտեմարանների բարեփոխման և լրամշակման նպատակով 2013-2014 ուստարվա համար նախատեսվում է հրատարակել շտեմարանի 4 նոր մասեր:

Շտեմարանի յուրաքանչյուր մասը ներառում է կառուցվածքային բոլոր 3 տիպերի առաջադրանքներ և բաղկացած է 3 գլխից՝

- 1-ին գլուխը կազմված է ընտրովի պատասխանով առաջադրանքներից,
- 2-րդ գլուխը ՝ կարճ պատասխանով առաջադրանքներից,
- 3-րդ գլուխը՝ պնդումների փնջերից:

1-3 մասերը կազմված են նախկին շտեմարանների առաջադրանքներից՝

- 1-ին մասը կազմվել է նախկին 1–ին (2012թ.), 2–րդ (2013թ.) և 5–րդ (2013թ.) մասերի առաջադրանքներից,
- 2-րդ մասը՝ նախկին 1–ին (2012թ.), 2–րդ (2013թ.) և 4–րդ (2011թ.) մասերի առաջադրանքներից,
- 3-րդ մասը՝ նախկին 1–ին (2012թ.), 2–րդ (2013թ.) և 3–րդ (2011թ.) մասերի առաջադրանքներից:

1-3 մասերում ընդգրկված առաջադրանքների մի մասը խմբագրված է:

Շտեմարանի 4-րդ մասի 1-ին գլխում տեղ են գտել ընտրովի պատասխանով առաջադրանքներ 2010թ. 1-ին և 2-րդ մասերի՝ 2013թ. 5-րդ մասում չներառված առաջադրանքներից, ավելացված են նաև նոր առաջադրանքներ, մասնավորապես՝ նախադասության գծապատկերի վերաբերյալ:

2-րդ և 3-րդ գլուխները կազմված են նոր առաջադրանքներից:

Պետական ավարտական և միասնական քննություններին նախապատրաստվողները կարող են օգտվել 2010-2013թթ. շտեմարաններից՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները

Ռուսաց լեզու

Տեղեկացնում ենք, որ 2013-2014 ուստարվա <<Ռուսաց լեզու>> առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի կառուցվածքում կատարվել են փոփոխություններ: Մշակվել են կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ, որոնք մինչ այժմ չեն եղել ռուսաց լեզվի թեստերում:

Նախատեսվում է 2013-2014 ուստարում հրատարակել շտեմարանի երեք նոր մաս, որոնցից առաջին և երկրորդ մասերում կներառվեն նախկին երկու մասերը, ինչպես նաև նոր՝ կարճ պատասխանով առաջադրանքները կընդգրկվեն երրորդ մասում:

Դիմորդները կարող են օգտվել նաև 2013 թվականին հրատարակված շտեմարաններից՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները:

Անգլերեն

Տեղեկացնում ենք, որ ԳԹԿ-ի կողմից հրատարակված <<Անգլերեն>> առարկայի 2014թ. պետական ավարտական, միասնական և կենտրոնացված (բանավոր) քննությունների ուղեցույցում կատարվել են փոփոխություններ: Դրանց հիման վրա շտեմարանում կատարվել են համապատասխան կառուցվածքային փոփոխություններ:

Շտեմարանի 1-ին և 2-րդ մասերը նախորդ տարի գործածության մեջ եղած շտեմարանների լրամշակված տարբերակներն են, որոնցում վերացվել են նկատված վրիպակները, սակայն կառուցվածքային որևէ փոփոխություն չի եղել:

Նոր տիպի առաջադրանքները, որոնք կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են և կզետեղվեն 3-րդ մասում:

Դիմորդները կարող են օգտվել նաև 2012թ. և 2013թ. հրատարակված հին շտեմարաններից՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները:

Ֆրանսերեն

Տեղեկացնում ենք, որ 2013-2014 ուստարում նախատեսվում է հրատարակել <<Ֆրանսերեն>> առարկայի նոր շտեմարան՝ բաղկացած երկու մասից: Առաջինը նախորդ հրատարակության երկու մասերի լրամշակված տարբերակն է, որտեղ որոշակի փոփոխություններով ներառված են բոլոր առաջադրանքները՝ բացառությամբ 9-րդ առաջադրանքի: Շտեմարանի այս մասում կառուցվածքային փոփոխություններ չեն կատարվել:

Կառուցվածքային փոփոխություններ կատարվել են շտեմարանի երկրորդ մասում: Այստեղ տեղ են գտել նոր տիպի՝ կարճ պատասխանով առաջադրանքներ, որոնք մինչև այժմ չեն եղել ֆրանսերենի թեստերում:

Դիմորդները կարող են օգտվել նաև 2013 թվականին հրատարակված շտեմարանից՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները:

Գերմաներեն

Տեղեկացնում ենք, որ 2013-2014 ուստարվա «Գերմաներեն» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի կառուցվածքում կատարվել են փոփոխություններ: Մշակվել են կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ, որոնք մինչ այժմ չեն եղել գերմաներենի թեստերում:

Նախատեսվում է 2013-14 ուստարում հրատարակել շտեմարանի երեք նոր մաս, որոնցից առաջին և երկրորդ մասերում կներառվեն նախկին երեք մասերը՝ բացառությամբ 2-րդ, 11-րդ և 12-րդ բաժինների: 12-րդ բաժնի փոփոխված և նոր՝ կարճ պատասխանով առաջադրանքները կընդգրկվեն երրորդ մասում:

Դիմորդները կարող են օգտվել նաև 2013 թվականին հրատարակված շտեմարաններից՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները:

Մաթեմատիկա

Տեղեկացնում ենք, որ 2013- 2014 ուստարվա համար «Մաթեմատիկա» առարկայի շտեմարանի նոր մաս չի հրատարակվի:

Շտեմարանի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը նախորդ տարի գործածության մեջ եղած շտեմարանների լրամշակված տարբերակներն են: Կատարված փոփոխությունները հիմնականում վերաբերում են նախորդ մասերում տեղ գտած վրիպակներին:

Դիմորդները կարող են օգտվել 2012 – 2013 թթ. հրատարակված հին շտեմարաններից, հաշվի առնելով կատարված փոփոխությունները, որոնք ընդգրկված են լրամշակված տարբերակում:

Ֆիզիկա

2013 թ. հրատարակվելու է <<Ֆիզիկա>> առարկայի նոր շտեմարանը՝ բաղկացած 3 մասից, որոնցից 1-ը և 2-ը նախորդ հրատարակության վերամշակված տարբերակներն են:

Շտեմարանի 3-րդ մասը ներառում է 3 և 4 կարճ պատասխան պահանջող նոր առաջադրանքներ ու պնդումների փնջով առաջադրանքներ: Պնդումների փունջը որևէ թեմայի շուրջ տրվող 6 պնդում է, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է տալ 3 տիպի պատասխան՝ <<Ճիշտ է>>, <<Սխալ է>> կամ <<Չգիտեմ>>:

Մանրամասներին կարող եք ծանոթանալ <<Ֆիզիկա>> առարկայի 2014 թ. պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույցում:

Քիմիա

Տեղեկացնում ենք, որ 2013 - 2014 ուստարվա համար նախատեսվում է քիմիայի շտեմարանի երեք գիրք, որոնցում ներառված առաջադրանքների հիման վրա կկազմվեն 2014 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը: Շտեմարանի 1-ին և 2-րդ մասերը նախորդ տարի գործածության մեջ եղած շտեմարանների լրամշակված տարբերակներն են: Կատարված փոփոխությունները հիմնականում վերաբերում են նախորդ գրքերում տեղ գտած վրիպակներին և որոշ խնդիրների վերաձևակերպմանը, ինչպես նաև հանվել է 3-րդ գլուխը, այսինքն՝ պնդումների փունջը կազմող առաջադրանքները:

3-րդ մասը ներառում է պնդումների փունջը նոր կառուցվածքով , ինչպես նաև նոր տեսակի առաջադրանքներ (համապատասխանեցում երեք սյունակով, երկհարցանի ընտրովի պատասխանով) և խնդիրներ (երկու և երեք ենթաառաջադրանքներից կազմված):

Դիմորդները կարող են օգտվել 2012թ. և 2013թ. հրատարակված հին շտեմարաններից՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները, որոնք կընդգրկվեն լրամշակված տարբերակում:

Կենսաբանություն

Տեղեկացնում ենք, որ 2014թ. <<Կենսաբանություն>> առարկայի պետական ավարտական և միասնական քննության թեստերում նախորդ տարիների համեմատությամբ տեղի են ունեցել որոշ փոփոխություններ: Մշակվել են նոր տիպի առաջադրանքներ, որոնք մինչ այժմ չեն եղել կենսաբանության թեստերում: Ըստ այդմ փոխվել է նաև թեստի կառուցվածքը:

2013- 2014 ուստարվա համար նախատեսվում է <<Կենսաբանություն>> առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանների 4 մաս, որոնցում ներառված առաջադրանքների հիման վրա կկազմվեն 2014 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը: Շտեմարանի 1-ին և 2-րդ մասերը նախորդ տարի գործածության մեջ եղած շտեմարանների լրամշակված տարբերակներն են:

Կատարված փոփոխությունները հիմնականում վերաբերում են նախորդ մասերում տեղ գտած վրիպակներին և որոշ առաջադրանքների վերաձևակերպմանը: Դիմորդները կարող են օգտվել 2012թ. հրատարակված շտեմարաններից՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները, որոնք կընդգրկվեն լրամշակված տարբերակում:

Աշխարհագրություն

Տեղեկացնում ենք, որ 2013-2014 ուստարվա համար նախատեսվում է «Աշխարհագրություն» առարկայի շտեմարանի երեք գիրք, որոնցում ներառված առաջադրանքների հիման վրա կկազմվեն 2014 թ. պետական ավարտական և միասնական քննության թեստերը:

Շտեմարանի 1-ին և 2-րդ գրքերը նախորդ տարի գործածության մեջ եղած շտեմարանների լրամշակված տարբերակներն են, որոնցից դուրս են եկել 8-րդ բաժինը `քարտեզագրական առաջադրանքները, և կարճ պատասխանով -խնդիր առաջադրանքները: Վերջիններս կընդգրկվեն 3-րդ գրքում, որը կներառի նաև պնդումների փունջ և նոր տեսակի կարճ պատասխանով առաջադրանքներ, որոնք մինչ այժմ չեն եղել աշխարհագրության թեստերում:

Դիմորդները կարող են օգտվել 2012-2013թթ. հրատարակված հին շտեմարաններից՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները: